| 1. ՈՒՍՈՒՑԻՉ | 2. ՊՈԱԿ դպրոց | 3. ԱՌԱՐԿԱ |
|---|---|---|
| Անի Մկրտչյան | **Վանաշենի միջնակարգ դպրոց** | **Մայրենի** |
| **4. ԴԱՍԱՐԱՆ** | **5. Ամսաթիվ** | **6. Ժամ** |
| **Առաջին** | **11.02.2022** | **Առաջին** |
| **7. Դասի նպատակ** | | |
| Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին:<br>Հիշե՛ք Բլում-Անդերսոնի աստիճանակարգը: | | |
| • Օգտագործելով ժ,ժ հնչյուն-տառը՝ կազմել բառեր<br>• Տարբերակել ժ հնչյու-տառի դիրքը բառերի տարբեր մասերում<br>• Պատկերել ժ,ժ հնչյուն տառերը օդում, պլաստիրինով անհատական գրատապտակների վրա, տետրում | **Աշակերտի հմտություններ**<br><br>Թիմային աշխատանք<br>Վերլուծություն<br>Ինքնակառավարում<br>Փոխօգնություն,<br>Համագործակցություն | **Ուսուցչի հմտություններ**<br><br>Ժամանակի կառավարում<br>ՏՀՏ հմտությունների կիրառման զարգացում |
| **8. Անհրաժեշտ նյութերը, պարագաներ** | **9. Դասի** բանալի հասկացությունները, անվանումներ, սահմանումները, որոնք աշակերտը պետք է սովորի | **10. Գնատահում** |
| Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար՝դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար: | Ի՞նչ կարեւոր հասկացություններ, սահմանումներ, անվանումներ, կան : | Ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք) |
| Համակարգիչ,, տեսասահիկ, արկղ, հույզերի պաստառ, տառադարան, գրատախտակ, կավիճ, A4 ֆորմատի թղթեր, տետր, կանաչ գրիչ, պլաստիրին, անհատական գրատախտակ, տետր, դասագիրք, երաժշտական արկղիկ, տեսանյութ, մեծադիր ժ,ժ տառի պաստառը, ժամացույց | ժ մեծատառ, ժ փոքրատառ, ժիր+այր, այր,ժամանակ, վայրկյան, որպե, տարի, դար, օր, շաբաթ | Ընկալման ստուգում<br>Ինքնուրույն աշխատանք<br>Ուղղորդված աշխատանք |

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

## 11. Դասի սկիզբ- 10րոպե

Այս հատվածում դուք պետք է բացատրեք ձեր «ինչու» կարեւոր դրույթը եւ ինչպես է այն կապվում ձեր մեծ նպատակի հետ:

Գրեք ինչպես, ինչ մեթոդով եղանակով եք իրականացնելու դասի սկիզբը, ինչ հրահանգներ եւ հարցեր եք տալու: Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները:

**Ուղղորդումներ պլանավորելու համար**

1. Վարքային եւ այլ սպասելիքների ներկայացում
2. Ի՞նչ են սովորելու աշակերտները (դասի թեման եւ նպատակը)
3. Կարեւոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ
4. Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ:
5. Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր:
6. Ի՞նչ են պատրաստվում անել դասին:
7. Խթանիչ վարժություն (եթե կա)

**ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**

- Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար
- Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ
- Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը
- Բավարար

**Դասն սկսելուց առաջ սովորողները հերթով մոտենում են հույզերի պանակին իրենց նկարով ամրակն ամրացնում են այդ պահին իրենց հույզը բնութագրող նկարի վրա:**
**Նախորդ դասն ամփոփելու համար ուսուցիչը գրատախտակին գրում է բառերի շարք և հանձնարարում արտագրել միայն այն բառերը, որոնց մեջ տեսնում են g տառը:**
**Աշխատանքի համար տրվում է 4 րոպե ժամանակ:**
**Արագ և ճիշտ կատարած աշխատանքները խրախուսվում են ուսուցչի կողմից:**

| | |
|---|---|
| հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար<br>-Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը<br>- Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը<br>- Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները | |
| **12. Նոր նյութի ներկայացում-20 րոպե** | |
| Ներկայացրեք ***<u>ինչ են սովորում աշակերտները,</u>***<br><br>*<u>Ինչպես են իրականացնելու՝ թվարկել այդ քայլերը, այսինքն՝ ձեր</u>* «ինչ» եւ «ինչպես » կարեւոր դրույթները:<br>Բերեք օրինակներ «ինչ» եւ «ինչպես » կարեւոր դրույթների համար:<br><br>Գրեք ինչպես, ինչ մեթոդով եղանակով եք իրականացնելու նոր նյութի ներկայացումը, ինչ հրահանգներ եւ հարցեր եք տալու:<br><br>Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները:<br><br>**ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**<br>-Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար<br>-**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,**<br>շարահյուսությունն ու լեզվական կառույցները | **Ուսուցիչն ասում է, որ արկղիկի մեջ ունի մի իր, որը պետք է գուշակեն հանելուկի միջոցով: Ընթերցում է հանելուկը՝**<br>**Ինձ հաճախ են նայում, հիշում,**<br>**Իրենց համար պահեր նշում,**<br>**Անգամ եթե ես չաշխատեմ՝**<br>**Կանգնած պահի պահն եմ նշում:**<br><br>**Այն աշակերտը, ով առաջինն է գուշակում հանելուկի պատասխանը, մոտենում է ուսուցչի սեղանին դրված արկղիկին և այնտեղից հանում ժամացույցը: Ուսուցիչը տալիս է մեկ միավոր պարունակող կտրոն և աշակերտը այն դնում է իր անվանական ծրարի մեջ:**<br><br>**Ուսուցիչը ներկայացնում է, որ ժամանակը հաշվելու համար մարդիկ օգտագործում են ինչպես երկար տևողությամբ ժամանակներ՝ տարի, դար, ամիս, շաբաթ, օր, այնպես էլ կարճ՝ ժամ, րոպե, վայրկյան: Ուսուցիչը միացնում է ժամացույցի <u>ժամացույցի</u> մասին երաժշտություն:**<br><br>**Ուսուցչի հրահանգով, որոշում են ժամացույց բառի բաղադրիչները՝ ժամ + ցույց**<br>**Ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակը:** |

-Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը
-Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով
-Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ
-Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը
-Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը
-Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ
-Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին
-Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը
-Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը

**Ուսուցիչը հարցնում է, թե որ հնչյունով է սկսվում ժամ բառը:**
**Հանձնարարում է կազմել բառեր՝**
**ժ հնչյունով սկսվող**
**ժ հնչյունով ավարտվող**
**ժ հնչյունը բառամիջում լսվող**
**Ուսուցիչը ևս բերում է օրինակներ:**

**Գրատախտակին փակցնում է մեծադիր ժ,ժ տառի պաստառը:**

**Ուսուցիչը հանձնարարում է նայել տառադարանին և գտնել ժ տառի տնակը, իսկ արկղիկից հանելով աշակերտի անուն, առաջարկում է մոտենալ և ցույց տալ:**

**Առաջարկում է բաց անել դասագրքերը և տեսնել թե ինչ տեսք ունի ժ տառը այնտեղ: Աշակերտներն ասում են որ ժ տառը ստացել է ժամացույցի տեսքը:**
**Ուսուցիչը աշակերտների օգնությամբ վերծանում է թեմատիկ նկարը:**
**Կարդում է ժ,ժ դասի բառերը և բացատրում դրանք:**
**«Ժամացույց» բնագրին ծանոթացնելու համար, ուսուցիչը միացնում է Տեսանյութը և աշակերտները տեսնում ու լսում են այն: Տեսանյութում առաջարկվում է դասագրքի բառակապակցություններով կազմել նախադասություններ:**
**Աշակերտները կազմում են նախադասությունները:**

## Ֆիզկուլտդադար

## Գրուսուցում

| | |
|---|---|
| | **Ուսուցիչն ասում է, որ իրենք ծանոթացան ժ,ժ տպատառերին, իսկ թե ինչպես է գրվում ժ,ժ ձեռագիրը կտեսնեն Տեսանյութով Տեսանյութից հետո, ուսուցիչը ինքն է ցույց տալիս այն գրատախտակին:**<br><br>**Աշակերտները փորձում են կրկնել սեղանների վրա մատը սահեցնելով:** |
| Գրեք ընկալման ստուգման հարցերը, որոնք դուք պլանավորում եք հարցնել դասի ընթացքում ձեր աշակերտներին յուրացված նյութը ստուգելու համար նախքան ուղղորդված աշխատանքին անցնելը: | Ընկալման ստուգումը `<br><br>Ո՞ր տառին ծանոթացանք<br><br>Ի՞նչ նվիրեց հայրիկը ժիրայրին<br><br>Ո՞ր բաղադրիչներից էր կազմված ժամացույց բառը<br><br>Ո՞ր բառակապակցությունները հանդիպեցին դասագրքում |
| **13. Գործնական աշխատանք-5 րոպե** | |
| Նոր գիտելիքն ու հմտությունը կիրառելու հնարավորություն ստեղծեք ձեր ուղղորդմամբ:<br><br>Գրեք ինչպես, ինչ մեթոդով/ եղանակով եք իրականացնելու գործնական աշխատանքը, ինչ հրահանգ/հրահանգներ եք տալու:<br><br>Գրել ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները:<br><br>**Ուղղորդումներ պլանավորելու համար**<br>1. Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու:<br>2. Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում :<br>3. Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու | Ուսուցչի հրահանգները՝<br><br>● Աշխատանքը կատարելու են զույգերով՝ յուրաքանչյուրն իր կողքի նստածի հետ:<br>● Յուրաքանչյուր զույգին տրվելու է, պլաստիրին, փոքրիկ գրատախտակ, A4 թուղթ,<br>● Անհրաժեշտ է պլաստիրինով փոքրիկ գրատախտակի վրա՝ ստանալ ձեռագիր ժ, ժ տառերը, որոնք անպայման ունենան ժպիտ:<br>● Այն խումբը, որը կկատարի լուռ, գեղեցիկ և արագ, այդ խումբը կհամարվի լավագույնը<br>● Աշխատանքի համար տրվելու է 10 րոպե ժամանակ<br>● Ուսուցիչը տալիս է ընկալման ստուգման հարցեր՝<br>❖ Ի՞նչ եք անելու<br>❖ Քանի՞ րոպե է տրվելու աշխատանքի համար<br>❖ Ո՞ր խումբն է գնահատվելու լավագույնը |

| | |
|---|---|
| 4. Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու:<br>5. Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են:<br><br>**ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**<br>-Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար<br>-**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները<br>- Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը<br>-Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները<br>-Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին<br>-Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը<br>-Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը<br>- Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը<br>-Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ | •  <br><br>Արագ և ճիշտ կատարված աշխատանքները փակցվում են «Գործնական աշխատանքներ» պաստառի վրա |
| **14. Ինքնուրույն աշխատանք- 5 րոպե** | |
| Գրե՛ք ինչ ինքնուրույն աշխատանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար:<br><br>Գրե՛լ առաջադրանքի հրահանգը, ուսուցչի եւ աշակերտների | **Ուսուցիչն ասում է, որ իրենք Ժ տառը գրեցին օդում, սեղանների վրա, պլաստիրինով անհատական գրատախտակներին: Ժամանակն է, որ իրենք այն կատարեն Գրատետրում, որտեղ վայելուչ ձեռագրով տրված է մեծատառն ու փոքրատառը:**<br><br>**Աշխատաքնի համար տրվելու է 5 րոպե ժամանակ:** |

| | |
|---|---|
| գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները:<br><br>**Ուղղորդումներ պլանավորելու համար**<br>1. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու:<br>2. Ի՞նչ վարժություն, առաջադրանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար<br><br>**ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**<br>-Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար<br>-**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները<br>- Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով<br>- Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը<br>-Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը<br>- Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով<br>- Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները | **Տետրում պետք է կատարեն միայն տառերի գրությունը, իսկ Ժ տառով բառերը կկատարեն տանը:**<br>**Ուսուցիչը տալիս է ընկալման ստուգում՝**<br>❖ **Ինչ եք անելու**<br>❖ **Աշխատանքի որ մասն եք կատարելու**<br>❖ **Քանի՞ րոպե է տրվում աշխատանքի համար:**<br>❖ Ուսուցիչը միացնում է երաժշտական արկղիկը:<br>❖ Երաժշտության ավարտվելուց հետո բոլորը փակում են տետրերը:<br>❖ Աշխատանքը շուտ վերջացրած երեխաները ձեռք են բարձրացնում:<br>❖ Ուսուցիչը կանաչ գրիչով մոտենում է և գեղեցիկ գրված տառերը վերցնում շրջանակի մեջ: |
| **15. Դասի ավարտ- 5 րոպե** | |
| Ամփոփեք դասի նպատակը, կարեւոր դրույթները՝ նշեք **Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր** | Ուսուցիչը աշակերտների հետ անդրադարձ է կատարում դասի նպատակներին՝ հստակ քայլերով ներկայացնելով՝<br>• Դասի նպատակները<br>• Դասի նպատակներին հասնելու գործողությունները<br>• Դասի որ հատվածում հասան և ինչ քայլեր |

**դրույթներին ու դասի նպատակներին**
**Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին**

Բացատրեք տնային հանձնարարությունը եւ հաջորդ քայլերը:

**Ուղղորդումներ պլանավորելու համար**

1. Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին
2. Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին
3. Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում

**ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**
-Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը
-Օգտագործել ուսունառության վերջնարդյունքի ձեւավորման եւ ստեղծման բազմապիսի միջոցներ
-Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը
-Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը
- Զարգացնել ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ

ձեռնարկեցին՝ դրանց հասնելու համար:

Ուսուցիչը ամփոփում է դասը հարցերի միջոցով:
Անդրադարձ է կատարում՝

- Ի՞նչ սովորեցին
- Ի՞նչ հասկացան
- Ինչի՞ց դժվարացան

| | |
|---|---|
| կատարելու ունակությունները | |